

եալ վկայից, Արգոյապատիւ պարոնէից Սարգսի Յովնանեանց, Մհերի Սիմէօն Թումանեանց, Պաշտարոյ Տէր-Չաքարեան եւ Յովհաննիսի Նազարեանց, համաձայն ընդհանուր կանոնական սովորութեանց ու ըստ ուղիղ համոզմանս խղճի մտօք վճռահատեցի այս ժառանգական ու բաժանական գործն ՚ի բաւարարութիւն երկուց վիճող կողմանց ըստ այսմ: Նախ առնելով ի կշռադատութիւն առ ի գնահատութիւն ասուիս վկայից եւ երկուցոնց կողմանց եւ առաջարկեալ փաստերն եւ ապացուցութիւնքն, համարել կտակագիրն իսկապէս անիրական եւ անվաւեր, իբրեւ յետ մահուան Մկրտչի Մելիք-Ձոհրաբեանց եղեալ գործողութեամբ, զորս եւ խաչագծելով թողուլ ի գործս իբրեւ անգոյ առարկայ: Երկրորդ բաժանագիրն որ կայացած ընդ մէջ Մկրտչի ու ընդ մէջ անչափահաս որբոց նորա Կարապետ անուն հանգուցեալ եղբոր ի 18 Յուլիսի 1877 ամի, սեփական ստորագրութեամբ Մկրտչի ու 19 վկայից ու վաւերացմամբ այնժամեան Սըրբազան Առաջնորդի Թեմիս Հայոց Ատրպատականի, Գերապատիւ Անդրէաս Արքեպիսկոպոսի, թէպէտ եւ ընդ էութեանս հիմնական օրինաց, վերաբերութեամբ անչափահաս որբոց՝ զուրկ է ըստ ինքեան կանոնական ճիշտ ձեւակերպութիւն է եւ կատարուած է առանց կանխագոյն գրաւորապէս ընտրեալ եւ հաստատեալ հոգաբարձուի ի կողմանէ անչափահաս որբոցն, սակայն իբրեւ քանի ամօք յառաջ եղած գործողութիւն թողուլ զայն, բաժանագիր իւր լիազօրութեան մէջ անխախտելի: Եւ որովհետեւ հանգուցեալ Մկրտչին գոլով անգաւակ եւ յանուն նորա ապա պարտաւորեալ կտակագիրն ճանաչուելով անիրական եւ անվաւեր հարկ էր անշուշտ եւ օրինական իրաւունք, նորա սեփական գոյքն եւ ստացուածքն մնալ դարձեալ ի ժառանգութիւն իւր Կարապետ եղբոր իւրեանց որբոց Նահրիմանայ, Տիգրանայ, եւ Ալէքսանդրի, սակայն բարեխղճաբար վճռահատեցի որ բաժանագրոյ մէջ յականէ յանուանէ յանուն հանգուցեալ Մկրտչի Մելիք-Ձոհրաբեանց բացի երկաթէ արկղէն ցուցակագրեալ քանի նոր գորգերէն եւ սենեակի պարագաներէն որք իբրեւ աւանդ կմնան որբոց մօտ եւ որք պէտք է համարուին սեփականութիւն առաջնորդական տան հայոց Դավրիժու, յանուն հոգեբաժնի եւ բացի = 80 թուման դրամական հաշուէն որոց պատասխանատուն է պրն. Սարգիս Տէր-Օհանեանցն մնացեալ ամենատեսակ գոյք, տնային պարագայք եւ պատրաստի ի զինչն տրամայ քանակութիւնք եւ այլ հաշիւք, նմանապէս զկնի բաժանման դարձեալ որպէս եւ իցէ շարժական կայք եւ պարագայք, որք ձեռք բերուած են աշխատութեամբ Մկրտչի, այնսմ բոլորովին թողուլ յօգուտ Համասիւրու անուն կնոջ նորա իբրեւ իւրեան սեփականութիւն: Որպիսի կայքն արդէն իսկ կգտնուին Համասիւրու տիրապետութեան տակն: Երրորդ՝ Բաժանագրոյ մէջ յիշատակուած անբաժան շարժական եւ անշարժ սեփականութիւնք երկուց եղբարց Կարապետի եւ Մկրտչի Մելիք-Ձոհրաբեանց որք են, մի մեծ տուն իւր առանձին սրահով եւ ընդհանուր շինուածքովք, մի փոքր տուն կից մեծ տանն դարձեալ իւր առանձին սրահով եւ շինուածքովք, նմանապէս երկուց տանց կալուածագրերն, պայմանագրեր եւ 44 հատ զանազան անձինքներից զանազան քանակութեամբ ստանալի կամ մասամբ ստացեալ պարտամուրհակներ թողուլ ընդ ամենայն անպայման կերպիւ յօգուտ եւ ի մշտնջենաւոր սեփականութիւն երկից որբոց հանգուցեալ Կարապետի, այն է՝ Նահրիմանայ, Տիգրանայ, Ալէքսանդրի եւ հետեւաբար ի կառավարչութեանն Վառվառէ անուն կնոջն նորա, զորս եւ այժմէն իսկ ստորագրութեամբ յանձնել նոցա: Չորրորդ՝ Հիւսիսիմէ մայր հանգուցեալ Կարապետի եւ Մկրտչի Մելիք-Ձոհրաբեանց վաղճանելով առանց կտակագրութեան բաժանագրոյ մէջ յանուն նորա գրուած սեփական գոյքն՝ որք ս. հ. այժմ եթէ կան պատրաստի, երկու եօրդան, երկու դօշակ, երկու բալինջ, մի հատ ջարփար, մի հատ խաթամ հայելի, մի հատ սնդուկ, մի հատ շիշմա մուշարէ, մի հատ խալի քալէի, հարկ դարձեալ մնալ յօգուտ եւ ի ժառանգութիւն իւր որից թոռանցն Նահրիմանայ, Տիգրանայ, եւ Ալէքսանդրի, զորս եւ յանձնել նոցա: Եւ ըստ այսմ, սոյն այս վիճողական ժառանգութեան եւ դատաստանական գործն համարել այսուհետեւ վերջացեալ:

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեանց:

Համասիւրու այրի կին Մկրտչի Մ. Ձոհրաբեանց, ճանաչելով սոյն վճռահատութիւն ըստ ամենայնի օրինաւոր, եւ ինձ յատկացեալ մասն համաձայն վճռոյս ստացայ լիովին եւ իմ անգրագիտութեան համար յանձնեցի ներկայաբար ստորագրել իմ այժմեան երկրորդ առն Մելքոնայ Պալաճեանց: Սոյն այս վճռահատութիւն ըստ ամենայնի ճանաչելով օրինաւոր, որոյ մէջ յիշատակեալ յականէ յանուանէ կալուածագիրք երկուց տանց, չելով օրինաւոր, որոյ մէջ յիշատակեալ յականէ յանուանէ կալուածագիրք երկուց տանց, պայմանագիրք 44 հատ պարսկերէն պարտամուրհակք, եւ այլ զանազան թղթեանք, նմանապէս գոյք եւ տնային պարագայք հանգուցեալ Հիւսիսիմէ անուն մօրն առն իմոյ Կարապետի, ստացայ լիովին, եւ որ ստորագրեմ. Հոգաբարձուի երկից որբոց իմոյ Նահրիմանայ, Տիգրանայ եւ Ալէքսանդրի Վառվառէ Ներսիսեանց. Որդիք Կարապետ Մ. Ձոհրաբեանց, Նահրիման Մ. Ձոհրաբեանց, Տիգրան Մ. Ձոհրաբեանց, Ալէքսան Մ. Ձոհրաբեանց:

Թիւ 235

Սոյն այս պատճէս է ուղիղ ընդօրինակութիւն իսկական վճռահատութեան, զոր վաւերացուցանեմ ստորագրութեամբ իմով եւ դրոշմամբ անուանական կնքոյ:

Ի 17-ն Հոկտեմբերի 1887 ամի, Դավրէժ:

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեանց:

Կնիք

Տուաւ այս գիրն տիկին Համասիւրուի Պալաճեանց առ այն որ իւր Բաժանական եւ ժառանգական գործն՝ որ ունէր ընդ որբոցն Կարապետի Մելիք-Ձոհրաբեանց, այն է հարազատ եղբոր իւր հանգուցեալ նախկին առն Մկրտչի Մելիք-Ձոհրաբեանց, որոց կողմանէ կարգեալ հոգաբարձու պրն. Սարգիս Տէր-Օհանեանց ու հոգաբարձուհի Վառվառէ մանէ կարգեալ հոգաբարձու պրն. Սարգիս Տէր-Օհանեանց վերահաստատութեան եւ վճռահատութեան հանգուցեալ Կարապետի ներկայացուցանելով սեփական ստորագրութեամբ կանկին հանգուցեալ Կարապետի հապտակիլ, իմոյս դատաստանական վերահաստատութեան եւ վճռահատութեան առանց այլեւս՝ ոչ ի ներկայիս եւ ոչ ի յապագային վէճ յարուցանելու ունեւտութեան առանց այլեւս՝ ոչ ի ներկայիս, որպիսի գործն արդէն վճռահատուած եւ վերջանալ վստահութիւն եւ զիտաւորութիւն, որպիսի գործն արդէն վճռահատուած եւ վերջացած լինելով՝ եւ իւրաքանչիւր կողման իւրեան հասանելի մասն յատկացնելով: Ուստի յաճ լինելով՝ եւ իւրաքանչիւր կողման իւրեան հասանելի մասն յատկացնելով համաձայն տիկին Համասիւրուի Պալաճեանց արդէն զիւր մասն լիովին ստանալով համաձայն տիկին Համասիւրուի Պալաճեանց արդէն զիւր մասն լիովին ստանալով համաձայն իւր կայացեալ վճռոյն, այսուհետեւ ազատ է նա ամենակերպ պատասխանատուութիւն որկայացեալ վճռոյն, յայտուհետեւ ազատ է նա ամենակերպ պատասխանատուութիւն որկայացեալ վճռոյն, յայտուհետեւ ազատ է նա ամենակերպ պատասխանատուութիւն որկայացեալ վճռոյն, յայտուհետեւ ազատ է նա ամենակերպ պատասխանատուութիւն որկայացեալ վճռոյն:

Ի 25-ն Յունվարի 1887 ամի. Դավրէժ:

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեանց:
ստորագր.

Կնիք

Ի 21-ն Փետրվարի 1887 ամի ստացեալ

Նորին Սրբազնութեան
Թեմակալ Առաջնորդին Հնդհանուր Ատրպատականի Ամենայն Հայոց:

Մարաղայ քաղաքի ազգային արական դպրոցի Հոգաբարձութիւնից՝
Ամենախոնարհաբար Ոնդրագիր

Ամենախորին յարգանք ունենք ծանուցանել Ձերդ Սրբազնութեան, առ այն՝ թէ ի նկատի ունենալով ոմանց հակառակ ընթացքը, ընդդէմ Սրբազնութեանդ հրամանին, ուստի խնդրում ենք հրաժարիլ մեզ մեր պաշտօնից:

Փարվիզ Ա. Էնակուրեանց
Լալա Տէր Յակոբեանց
Մելքոն Պալապեանց
Մուղսի Բաղդասար Ղազարեանց

1887, II, 7-ն, Ի Մարաղայ

Վերադարձնելով զօրոյն խնդրագիր առ Մեծապատիւ Հոգաբարձուս՝ որոց եւ յայտնելով զմեր կատարեալ գոհունակութիւնս վասն ազգասիրական ջերմեռանդ ծառայութեանց յօգուտ եւ ի յառաջադիմութիւն կրթութեան եւ դաստիարակութեան ազգային մանկտենոց մերոց, յորդորեմք, շարունակել ըստ առաջնոյն զօգտաւէտ ծառայութիւնս Հոգաբարձական պաշտաման առանց ունկն դնելոյ բանից կողմնակի անբարեմիտ անձանց՝ որք միշտ անզօր լինելոցն յարուցանել զխոչնդոտս եւ զարգելս առաջի օգտակար գործունէութեանց Ձերոց. Բաւական է զի մեք եւ որոց ընդ մեզ են բարեմիտ անձինք ճանաչեն զՁեզ եւ գնահատեն զանակնկալ պիտանի ծառայութիւնս Ձեր:

22 Փետրվարի 1887 ամի. Դավրէժ

Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

Առ Մեծապատիւ Հոգաբարձուս Ազգային դպրոցի Հայոց Մարաղայի:

Տեղւոյդ Վարդան քահանայի արած պէս-պէս ղեղծմունքներն ու օրինազանցութիւններն հակառակ իւր քահանայական կոչման եւ ընդդէմ իսկ կարգաց եւ կանոնաց մերո Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ մեզ քաջ յայտնի էր գրաւորապէս յառաջագոյն, որոց ստուգութեանց համար աներկմիտ էի. սակայն այժմուս գրաւոր արձանագրութեամբ հայոց հասարակութեան տեղւոյդ կվերստուգուի եւ կհաստատուի նորա գործած այն ամեն կանոնազանցութիւններն: Ուստի ղեռ նա մնալու է արգելուած ընդ ապաշխարանօք եւ ընդ պատօք, իսկ քահանայագործութիւն անելու է Տէր Փիլիպպոսն եւ համաձայնագրութեան մէջ արդեանց եկամուտն որ յատկացուած է յանուն տէր Վարդանին, եւ մինչդեռ սա արգիլուած է՝ հարկ է հոգաբարձութեան ճիշտ հաշուով ստանալ տէր Փիլիպպոսէն այդ արդիւնքներն եւ պահել առ Ձեզ մինչեւ այդ մասին կընդունէք մեզանից առանձին գրաւոր տնօրէնութիւն:

Մեր յորդորանքն առ Ձեզ այս են, որ դուք առանց այս ու այն անձանց աննշան խօսքերին նշանակութիւն տալու շարունակեցէք բարեխղճաբար Ձեր յանձնառեալ ազգային պարտաւորութիւններն եւ հսկեցէք՝ որքան կարելի է դպրոցի յառաջադիմութեան եւ բարեկարգութեան. հարկաւ՝ նոյնպիսի ոգւով ջերմեռանդութեամբ աջակից է միշտ Ձեզ պրն. Օրբէլեան: Ապա թէ ոչ, անհնարին է ծառայել ազգի եւ միշտ գոհունակութիւն լսել. զի խաւարասէր անձինք մանաւանդ թէ հակառակասէր ամենայն տեղ կգտնուին. քաջութիւն է՝ երբ համբերութեամբ գործն կհասցնուի իւր օգտակար նպատակին:

Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

22-ն Փետրվար 1887 ամի. Դավրէժ

Արգոյապատիւ պրն. Մելքոն

Դանի օր առաջ նամակ էիք գրած ի զիմաց Ձեր ընկերակից արգոյ Հոգաբարձուաց եւ խնդրած էիք Մարաղու համար մի ուսուցիչ:

Շատ զարմացայ, որ դուք արժան էիք համարել յիշել նաեւ այն ամենաանարգ Յովհաննէս Օրբէլեանի անունն: Միթէ նորա գործած շարիքն եւ ամենակերպ կեղտոտութիւնքն այդպէս շուտով մոռացայք, զորս գործոց այդ տեղ ի կատարեալ նախատինս մեր ազգութեան: Միով բանիւ երբ նա ինքն կատարելատիպ է ամենայն թիւրիմացութեանց՝ միթէ կարելի է այսուհետեւ համարել նորան վարժապետ եւ կամ դաստիարակ եւ հաւատալ նմա մատաղ սերնդոց կրթութիւն:

Ինչպէս յառաջագոյն յայտնած է Ձեզ պրն. Ալէքսան Տէր Օհանեանցն ահա Մարաղու համար ուղարկեցի իբրեւ պիտանի վարժապետ Մարգարն Տէր-Պաշտարեան, որ տէր է շատ բարեմասնութեանց, ունի ձիրք ու շնորհք ուսուցչութեան, ստացել է իւր կրթուչառ բարեմասնութեանց, նամանաւանդ իւր օրինակելի համեստաբարոյութեամբ թիւնն՝ ներսիսեան դպրոցումն, նամանաւանդ իւր օրինակելի համեստաբարոյութեամբ թիւնն է միշտ ամենայն տեղ արժանավայել յարգանք եւ համակրանք: Ուրեմն Ձեր հազտել է միշտ ամենայն տեղ արժանավայել յարգանք եւ համակրանք: Ուրեմն Ձեր համար կատարեալ գիւտ է այս անձնաւորութիւնն եւ դուք աշխատեցէք գնահատել սորա մար կատարեալ գիւտ է այս անձնաւորութիւնն եւ մխիթարեալ պահպանել: Դուք այս իմ գովեստից արդիւնքն շուտով կտեսնէք եւ գոհ կլինէք ըստ ամենայն մասաց:

Թէեւ վարժապետ Մարգարն արժանի է աւելի ուժիկի եւ վարձահատուցեան, սակայն՝ ստանայ ըստ Ձեր որոշման Վաթնուն թուման, կտայք սորան նաեւ ճանապարհական ծախքն Թաւրիզէն մինչեւ ց Մարաղա, հարկաւ կտայք դպրոցումն բնակութեան տեղ:

Մեծարգոյ Փարվիզ Ոսկանն եւ պրն. Լալային կյիշէք յարգանաց ողջօրնս եւ կատէք վերջացնեն սպանեալ հայի գործն ինչպէս որ պրն. Ալէքսան Տէր Օհանեան գրած է:

Ոնդրում եմ ասէք պրն. Լալային որ հոգացողութիւն անէ այս տարուայ պտղի եւ այլ արդիւնքներն ժողովելոյ մասին Մարաղու վիճակին:

4-ն Հոկտ. 1888, Դավրէժ

Աղօթարար՝
Ստափաննոս Եպիսկ. Մխիթարեան:
ստորագր.

Արգոյապատիւ պրն. Մելքոն

Ընդունեցի Մարաղայէն եկած զանազան բովանդակութեամբ զանգատագրեանք, թէ Ձեր եւ թէ Ձեր հոգաբարձական պաշտօնէդ հրատարելուն մասին եւ թէ նոր երեսփոխ-
ընտրութեան մասին: Բայց այսչափ կզբեմ որ թէ հոգաբարձութիւնից ով որ կցանկա-
նայ հրատարիլ պաշտօնէն՝ անշուշտ նորա պարտականութիւնն է իւր հրատարագիրն ու-
ղարկել յանուն վիճակաւոր Առաջնորդի, որից ինքը հաստատուած է, որովհետեւ
այսպէս է ընդհանրացած օրէնքն եւ կանոնն, եւ ոչ թէ յանուն հասարակութեան: Ուստի
կզբեմ Ձեզ, որ Դուք առանց առաջնորդական իշխանութեան գիտութեան իրաւունք չու-
նիք դպրոցական կամ եկեղեցական գումարն յանձնել այլ մարդոց որին դեռ չգիտենք
թէ ո՞վ է եւ ի՞նչ վստահելի անձնաւորութիւն. ի հակառակ դէպս՝ Դուք պատասխա-
նատու կլինիք ամենայն դրամական հաշւոց իբրեւ պարտագանց:

Եւս Աղա Սարգիս Թումանեանցի գրեցի եւ խնդրեցի, որ ամենայն բան պէտք է մնայ
իւր առաջին վիճակի մէջ մինչեւ իւր գալն ՚ի Դավրէժ, որպէսզի ստուգապէս տեղեկա-
նալ ամենայն բան եւ ապա ըստ այնմ տնօրինել զարժանն:

Նմանապէս յայտնեցէք պրն. Լալայի, որ մինչեւ մեր կողմանէ հրաման չլինի՝ երբեք
ոչ ոք իրաւունք չունի երեսփոխանական հաշիւ եւ գործ պահանջել իրանից, ինքն եւս
իրաւունք չունի յանձնել հաշիւ ոչ ոքի մինչեւ նախապէս մեք տեղեկութիւն չունենանք:
Թէ ինչ արդիւնք այս նոր խառնակութիւն է եւ ո՞վ որ է պատճառն ժողովրդական
այսպիսի շփոթութեան:

Ժողովուրդն կարող է միմիայն զանգատ անել թէ երեսփոխանի եւ թէ հոգաբարձուի
անօգտակար կամ խպառ վնասակար գործոց համար, իսկ իշխանութեան պարտքն է
քննել եւ ստուգել ճշմարտութիւնն եւ ըստ այնմ տնօրինել, բայց ոչ թէ ժողովուրդը
ինքն կամ պէտք է անէ ինչ որ կցանկայ:

16 Մայիսի 1889, Դավրէժ
Առաջնորդ Վիճակի Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

Մեծարգոյ պրն. Մելքոն

Ձեր հրատարագիրն ու առանձին նամակը ստացայ, բայց Ձեզ հոգաբարձական
պաշտօնէդ հրատարացնելն ինչպէս որ դուք կլինդրէք, անհնարաւոր կհամարեմ զա-
նազան պատճառաւ, որ դպրոցական բարեկարգ ընթացիցն խոչնդոտ եւ անօգուտ է:
Նամանաւանդ ոչ ոք Ձեր պաշտօնավարութեան մասին բացի գոհունակութիւնից չունի
տրտունջ կամ զանգատանք: Նմանապէս գոհ է Ձեզանից Աղա Սարգիս Թումանեանց
որ եւ Ձեր իսկ խորհրդով հաշտեցութիւն անելով դպրոցապատկան գումարաց մասին՝
համաձայնութիւն է կայացել, որ այժմեան եղեալ 300 թումանից 100 թուման՝ Աղա
Սարգիս Թումանեանցի Վաճառականական տունն շահացնէ իսկ 100 թուման՝ պրն.
Միրզա Աֆիթանդիլեանցն եւ մնացեալ 100 թումանն դուք շահացնէք թումանին մի
ապաստով:

Եւ այս կարգադրութիւնն ի թիթեւութիւն Ձեր՝ կարծեմ շատ լաւ է եւ օգտակար
որով դպրոցն կշարունակէ անխափան իւր գոյութիւնն: Իսկ եթէ դուք սեփական Ձեր
պատասխանատուութեամբ արդէն Ձեզ մօտ եղած 317 1/2 թուման դպրոցական գումարն
շահացնել, ինչպէս Աղա Սարգիսն նմանապէս եւ ես, ունեմք առ Ձեզ կատարեալ
վստահութիւն, դրամն թողուլ Ձեր մօտ եւ Ձեզանից պահանջել միշտ հաշիւ, իսկ պար-
տամուհական դեռ ով յանուն Սուրբ Յովհաննէս եկեղեցոյ եւ տեղոյդ հայոց դպրոցի՝
գոր առաքել առ մեզ ի պահարանութիւն՝ ի գործս Առաջնորդութեամբ վիճակիս:

Ահա այսպէս է մեր ներկայ դիտաւորութիւնն եւ կարծեմ ըստ ամենայնի լաւ է յօդուտ
դպրոցի եւ ժողովրդական խաղաղութեան:

Յայտնեցէք իմ խորին շնորհակալութիւնս եւ օրհնութիւնս այն բարեգործ անձանց
որք ազգասիրաբար օգնել ցանկացել են ազգային դպրոցին իւրեանց նուէրքներով ու-
րեմն աշխատեցէք հոգաբարձուաց հետ ժողովել այդ նուէրներն եւ ըստ կարգին՝ ի գործ
դնել դպրոցական պիտոյից համար:

Աղօթարար՝
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան (ստորագր.):

Ի 29 Մայիսի 1889, Դավրէժ

Կնիւք
Առաջնորդ Վիճակին
Հայոց Ատրպատականի
Թիւ 264
Ի 24-ն Յուլիսի 1889, Դավրէժ

Մեծարգոյ Հոգաբարձուի Դպրոցին
Հայոց Մարաղայի
Պրն. Մելքոնայ Ուալաֆեանց

Նախեղակ ուսուցիչն դպրոցին հայոց Մարաղայի՝ Յովհաննէս Օրբէլեանց ձեռագրաւ
պարտական լինելով Ս. Յովհաննէս եկեղեցոյն հայոց տեղւոյն երեսուն եւ երեք թու-
ման, դոյն հաշիւն ցարդ կմնայր անվճար: Սակայն ի ներկայիս այդ 33 թուման գու-
մար պարտուց ամբողջովին ստացուելով Օրբէլեանցէն՝ կմնայ ի պահեստի առ պրն.
Գրիգորն Մելիք Ազարեանց:

Այդ գումարոց ստացման համար եղած են դատաստանական եւ տասանորդական եւ
այլն ծախք ընդ ամեն հինգ թուման. մնացեալ քսան եւ ութն թուման ստանալով Մե-
լիք-Ազարեանցէն գրեցէք ի մուտս դպրոցական արդեանց հայոց Մարաղայի. իսկ առ
Ձեզ գտանեցեալ ստացագիրն եւ գրաւթուղթն Օրբէլեանցի եւ ստորագրութիւնն պրն.
Լալայի վերադարձուցէք ինքեանց: Եւ սոյն հաշիւն պարտականութեան համարեցէք
այսուհետեւ ի սպառ վերջացեալ, միանգամայն զեղջելով սոյն առթիւ յառաջացեալ
գրութիւններն եւ ըստ այնմ ուղղել դպրոցապատկան հաշիւն ոչ ոք համարելով
պատասխանատու այդպիսի չնչին վնասուց: Ընդ ամին գրեցաւ ի տեղեկութիւն պրն.
Լալային:

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

1889 Օգոստոս 10, Մարաղայ

Մեծապատիւ Պրն. Մելքոն Խալաֆեանց

Մենք բոլոր ժողովուրդս մեծապէս շնորհակալ ենք Ձեզանից որ մինչ այժմ նպաստել էք Մարաղու ժողովրդեան նոցա յառաջադիմութեան եւ լուսաւորութեան համար թէ գործքով եւ թէ խօսքով, այժմ եւս խնդրում ենք Ձեզանից որ օգնէք մեզ այդ գործում որ պատահել է արդէն գիտէք թէ ընդհանր ինչ գործեր է արել եւ ինչքան նեղացնում է մեզ, մենք սրբազանին գրած ենք այդ մասին խնդրում ենք որ դուք էլ նեղութիւն քաշէք սրբազանին ասէք որ մեզ ի սէր Գրիստոսի ազատէ ընդհանր ձեռքից, եւ դուք էլ Աստուծով վերադարձման ժամանակ կտեսնէք ինչ գործեր է արել եւ ի դուր տեղը նեղացնում է ժողովրդին: Երեցփոխ պրն. Յակոբ Մնացականեանի տնում մի տղա էր մեռել այստեղ հաւաքուած էին բոլոր ժողովուրդը, պրն. Համբարձումն էլ այնտեղ էր հարցրեցինք բոլոր ժողովուրդը ասացին չենք ուզում ընդհանր ամենայն նեղութիւն յանձն կառնենք մինչեւ անգամ եթէ հարկ լինի Դավրէժ կերթանք բողոքելու չենք ընդունիր ընդհանր: Մի քանի ժամ նորանից յետոյ պրն. Պաղտասարը լսելով այդ բանը գնացել ընդհանր ասել էր, նա էլ ասել էր գնա, ասա ժողովրդին ինձ ընդունում են թէ ոչ նա էլ մեզ կանչեց մենք բոլորս ասացինք չենք ընդունում: Ընդունեցէք սիրով բարեկեցութիւն: Ի դիմաց Մարաղու հայ ժողովրդեան:

Մեծարգոյ պրն. Մելքոն,

Անցեալ փոշտայիւ ստացայ Ձեր նամակի հետ եւ մի խնդրագիր քանի եւ եթ անձանց ստորագրութեամբ, որով իբրեւ հոգաբարձական նոր ընտրութիւն անելով, կխնդրէին յինչն հաստատութիւն:

Շատ կցաւիմ որ տեղոյը թեթեւ հասարակութիւն եւս խաղաղիկ շուտ շուտ կը առնան կողմնակի անձանց անխաղաղասիրութեանց, ոչ այն նպատակաւ իբրեւ թէ դպրոցի եւ հասարակաց բարին կցանկան, այլ թէ իւրեանց խաւարասէր հաճոյքն եւ իղձերն կատարած լինին յանուն դպրոցի ի դէմս այս ու այն անձի շարանեց հնարքներով:

Պրն. Մելքոն, ոչ ապաքէն դուք այս հանգամանքներն լաւ գիտէք ուրեմն ինչ հարկ կայ, այդպիսի միջին խլրտմունքների նշանակութիւն տալով հետի կալ եւ կամ հետի կենալ ցանկալ թէ Ձեզ եւ թէ այն գործող անձանց, որք մինչեւ ցարդ ջերմեռանդութեամբ եւ համերաշխութեամբ միմիանց հետ կառավարել էք դպրոց, եկեղեցի եւ ազգային գործեր, որոց համար յայտնած եմ միշտ իմ կատարեալ շնորհակալութիւն:

Որովհետեւ հարկ չկայ դպրոցական գործերն թողուլ երեսի վրայ, ի նախատինս այլոց եւ պարապել ներքին երկպառակութեամբ եւ խռովարարութեամբ խռովասէր անձանց, ուստի կորդորեմ զՁեզ եւ նախկին ընկերակից Ձեր հոգաբարձութիւն կառավարիցէք բարեմտութեամբ դպրոցական եւ ազգային գործերն ըստ առաջնոյն մինչեւ եւս առանձին տնօրինութիւն կանեմ այդ վերջին խնդրագրոյ մասին:

Ուսումնարանի դրամն պէտք է գեղութեամբ պահպանէք եւ մինչեւ վերջն դուք էք հոգաբարձու եւ հաշուապահն դպրոցական դրամոց:

Կյուսամ թէ կկատարէք ամեն բան խաղաղութեամբ յօգուտ մեր ազգային շահոց եւ յառաջադիմութեան:

Պրն. ուսուցչին լաւ պահպանեցէք:

Աղօթարար
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

Ի 15 Հոկտ. 1889, Դավրէժ

Մեծարգոյ պրն. Մելքոն,

Շատ կցաւիմ, որ խառնակիչ քանի անձինք կվրդովեն Մարաղայի հայոց ժողովրդոց խաղաղութիւնն եւ կվնասեն դպրոցական եւ այլ ազգային գործեր: Ինձ քաջ յայտնի են այդ վատթար անձինքն եւ եթէ նոքա յետ չկենան իւրեանց սովորական շարագործուայր վատթար անձինքն եւ եթէ նոքա յետ չկենան իւրեանց խաւարամիտ թիւններից՝ կղղջան շարաշար եւ բնաւ երբեք չեն հասանել իւրեանց խաւարամիտ խորհրդոց յաղթութեանցն:

Ուստի ահա հոգաբարձական հաստատութեան առթիւ եղած ներկայ տնօրինագիրն առ Ձեզ ուղարկելով՝ կյանձնարարեմ Ձեզ, որ դուք Փարվիզ խանին եւ միւս նշանաւոր անձանց յայտնելով այս մասին, միմիանց աշակցութեամբ յառաջ վարել դպրոցի կեալ անձանց յայտնելով այս մասին, միմիանց աշակցութեամբ յառաջ վարել դպրոցի գործերն առանց այլեւս ուշադրութիւն դարձնելոյ կողմնակի խօսքերի անխաղաղասէր անձանց:

Միով բանիւ, եւ շատ զարմացած եմ, եթէ մի հոգաբարձու հրաժարի իւր պաշտօնէն հարկ է իւր հրաժարագիրն ըստ կարգի առ իս ուղարկել եւ ոչ թէ առ անգոյ եւ անծանօթ ինքնաստեղծ իշխանութիւն: Նմանապէս հոգաբարձուն կհաստատուի Առաջնորդական Իշխանութիւնից եւ ոչ թէ ըստ խորհրդոյ խարդախ անձանց:

Կայ Ատրպատականումն մի այլ հոգեւոր ազգային իշխանութիւն որ կարող լինի տնօրինել հայոց դպրոցական գործերն: Ի հարկէ այս ամեն են լկտի եւ անամօթ յանդրգնութիւն, որով կմոլորացնեն պարզամիտ ժողովուրդ:

Իմ վերջնական տնօրինութիւնն այդ գրութիւնն է, զոր առ Ձեզ ուղարկեցի ի պարտաւարտաւոր կատարումն, եթէ նոր ընտրած այդ հոգաբարձուներից ով ոք հրաժարելու լինի դուք մնացածի հետ բաւական էք ու ոչ ոք այլեւս պէտք է, բաւական է խռովել ժողովուրդն: Իսկ եթէ կունենայք որ եւ իցէ խորհուրդ ազգային գործոց համար, ուղղակի առ իս գրեցէք եւ կստանայք հարկաւոր պատասխանն:

Նմանապէս եթէ դպրոցական գումարներն բաց ի թումանեանց Կանտորէն, այլ եւ այլ անձանց մօտ կան եւ եթէ այդ շահացնող անձինք կամ չեն կամին պահել գումարն եւ կամ ինքեանք անյուսակի անձինք են, կարող էք յետս պահանջել նոցանից եւ դուք շահացնէք որոշեալ տոկոսեօք յօգուտ դպրոցի:

Միով բանիւ, պէտք է վերջ տրուի այդպէս անարգ խռովութեանց:
Առաջնորդ Վիճակի
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

Ի 28 Դեկ. 1889, Դավրէժ

Վիճակաւոր
Առաջնորդ Հայոց
Ատրպատականի
Թիւ 382
28 Դեկտեմբեր 1889 ամի
Ի Դավրէժ

Գերաստիճան Փարվիզ Ոսնի էնակուլօփեանց,
Արգոյամեծար Պարոնէից Մելքոնայ Ուլաֆեանց,
Պետրոսի Նսայեան եւ Մհտեսի Յակովբայ Մնացականեան:

Մարաղայի թէ բնիկ եւ թէ երթեւեկ Հայոց ժողովրդականք իւրեանց գովելի միաբան-
ութեամբն ու համերաշխութեամբն դէպի ազգային, եկեղեցական եւ դպրոցական գործեր
միշտ համակրելի հանդիսացած էին, զորս եւ ստուգած ենք բազմիցս փորձով ու
գործով. կցաւիմք արդարեւ թէ այդ խաղաղասէր Հայոց հասարակութիւնն ընդէր այժմ
անձնատուր եղած է չարախորհուրդ վրդովմանց եւ ներքին վնասակար երկպառակու-
թեանց առանց զգուշաւոր հեռատեսութեանց թէ հետեւելով այս եւ այն անձանց չարա-
միտ եւ նենգաւոր խորհրդոց, բայց միայն ի վտանգի կտրուին հասարակական շահերն,
ողորմելի դպրոցն եւ այլ ազգային գործերն ի կատարեալ նախատինս մեր ազգային
պատուոյն առաջի օտարաց:

Միթէ Մարաղայի Հայոց ժողովրդականք այնքան անկարող են հասկանալ այսպիսի
մի յայտնի ճշմարտութիւն եւ հեռի մնալ վնասակար խորհրդատուներէից, որք իւրեանց
նենգամտութիւնքն գիտեն ծածկել կեղծ ազգասիրութեան դիմակի ներքոյ: Ահա այդ
խսկ էր պատճառ, որ յատկապէս գրով եւ հրամանաւ յանձնարարել էինք մեր հոգեւոր
նուիրակ արժանապատիւ Տէր Յովսէփ աւագ քհնյի Տէր-կարապետեան որ իւր նախա-
գահութեամբ ի ժողով հրաւիրելով ժողովրդականս ընտրել եւ լրացնել թերի թիւն հո-
գաբարձուաց տեղոյդ դպրոցի: Ընտրութեան թերթն ընդունելով՝ մինչ հարկ էր մեզ
տնօրինել զարժանն, ահա յատակ թղթաբերի ձեռօք կընդունենք երկրորդապէս մի այլ
ընտրական քմահաճ թերթ եւ մի նոյնպիսի թերթ ընտրութեան միանգամայն կուղար-
կուի յանուն հոգաբարձութեան Արամեան դպրոցի, որն ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարզապէս
չեղումն յօրինաւորութիւնից եւ անպարտաճանաչ յանդգնութիւն, հարկաւ թելադրու-
թեամբ խարդախամիտ անձանց, որք օգուտ քաղելով ժողովրդոց պարզամտութիւնից,
կամեն այդպիսիեան իբրեւ հասանել իւրեանց խառնարային նպատակաց յաջողու-
թեանցն:

Ուստի այդպիսի տգեղ եւ անպիտան խեղկատարութեանց եւ անարգ գործոց եւ գոր-
ծողութեանց յառաջն առնելոյ համար որ ոչ Առաջնորդական Իշխանութիւն եւ ոչ Մա-
րաղայի Հայոց հասարակութիւնն խաղաղիկ են ի ձեռս խռովայոյզ անձանց կտնօրինեմք
վերջնականապէս ըստ այսմ նախ՝ Գերաս. Փարվիզ Ոսնի եւ պրն. Մելքոնն Ու-
լաֆեանց իբրեւ վաղեմի ընտրեալ եւ ոչ հրաժարեալ հոգաբարձուք կան ու կմնան իւ-
րեանց պաշտօնավարութեանց մէջ, որք եւ գովելի հաւատարմութեամբ օգտակար եղած
են ազգային դպրոցի եւ այլ հասարակական գործոց, եւ յընկերակցութիւն սոցին կնշա-
նակեն Պետրոս Նսայեան, եւ Մհտեսի Յակովբն Մնացականեան, եւ համախորհուրդ
աջակցութեամբ միմիանց հարկէ յառաջ տանել դպրոցի եւ ազգային այլ գործեր յօգուտ
Հայոց հասարակութեան եւ գործոյն կրթութեան մանկանց ազգիս: Ձանալ արդիւնաւոր-
ել դպրոցի նիւթական միջոցներն, զոր եւ մատակարարել ուղիղն տնտեսութեամբ եւ
ամ ըստ ամէ ներկայացուցանել հաշիւ Առաջնորդական Իշխանութեան ուսումնական եւ
տնտեսական մասին դպրոցի:

Առաջնորդ Վիճակին Հայոց Ատրպատականի
Ստեփաննոս Նպիսկ. Մխիթարեան:
(ստորագր.)

(Կնիք)

(Կնիք)

Արգոյ Մահտեսի Բաղդասարայ Ղազարեանց

Համաձայն առաջարկութեան Մեծապատիւ հոգաբարձուաց դպրոցի Հայոց Մարաղայի
նշանակեմք զՁեզ ի պաշտօն երեսփոխանութեան համար եկեղեցւոյ Հայոց քաղաքիդ ի
տեղի հրաժարեալ երեսփոխանի Մահտեսի Յակոբայ Մնացականեան, յորմէ հարկ է Ձեզ
ստանալ զիտութեամբ հոգաբարձուաց զամենայն զարդս եւ զանօթեղէն եւ զհաշիւ: Ի
տեսնել զիտութեամբ հոգաբարձուաց զամենայն զարդս եւ զանօթեղէն եւ զհաշիւ: Ի
տեսնել զիտութեամբ հոգաբարձուաց զամենայն զարդս եւ զանօթեղէն եւ զհաշիւ: Ի
տեսնել զիտութեամբ հոգաբարձուաց զամենայն զարդս եւ զանօթեղէն եւ զհաշիւ: Ի
տեսնել զիտութեամբ հոգաբարձուաց զամենայն զարդս եւ զանօթեղէն եւ զհաշիւ:

Ի 17 Մարտի 1890 ամի, Ի Դավրէժ:

Առաջնորդ Վիճակի Ստեփաննոս Նպիսկ. Մխիթարեան:

Արգոյ պրն. Մելքոն

Ձեր ուսումնարանի մասին ոչինչ չէք գրել, բայց Բժշկապետ պրն. Բաբայեանցն մեծ
չնորհակալութիւն եւ գովեստ յայտնեց թէ արգոյ հոգաբարձուաց մասին եւ թէ ուսուցչի
աշխատութեան վերաբերութեամբ, որ ամեն բան շատ բաւարար էր գտել:

Դուք խոստացել էիք վարժապետին տալ վարձ մինչեւ ութսուն թուման, սակայն
վարժապետն այդ հաշուով չէ ստացել իւր ուժիկն, ուրեմն լաւ աշխատողին պէտք չէ
քաջալերութիւն, ուրեմն ի՛նչ բաւարարութիւն նորա համար, երբ աշխատութեան վարձն
ստանալու է մեծ դժուարութեամբ:

Շատ լաւ կլինի բաւականացնէք վարժապետին եւ առաջիկայ տարուայ համար նոր
պայման կապէք, գուցէ կարողանայ նա իւր ամուսինն բերել տալով, վարժուհութեան
պաշտօն յանձնենք հետեւաբար, յարմար կլինի անգամ քահանայութեան եթէ նա յանձն
առնու:

Միով բանիւ կյանձնեմ Ձեզ կարգի դնել վարժապետի գործն որ դարձեալ այդ մա-
սին չունենանք խօսակցութիւն:

Տէր Վարդանն ինձ գիր էր գրել եւ քահանայական կէս բաժինի մասին խնդրել էր,
թող պրն. Լալան Տէր Փիլիպպոսի կէս բաժինը իւր մօտ պահէ առ այժմ, յետոյ հար-
կաւոր տնօրէնութիւն կանեմ, թող միամիտ լինի Տէր Վարդանն որ ամենեւին զրկանք
չի ունենալ:

Աղօթարար
Ստեփաննոս Նպիսկ. Մխիթարեանց:
(ստորագր.)

6, 14, 1890, Դավրէժ

Մեծարգոյ պրն. Մելքոն,

Ստացայ նամակդ, որոյ հետ նաեւ հրաժարագիրդ հոգաբարձական պաշտօնիցդ: Գիտեմ, իրաւացի է Ձեր ամեն բանաւոր պատճառաբանութիւնքն, որ ստիպեալ էք հրաժարիլ, սակայն կան արդեօք այնքան հաճելի հոգեկան բերկրանք, երբ մարդ տանելով ամենակերպ դժուարութեանց, խոչընդոտութեանց, նամանաւանդ անչնորհակալ ու ապերախտութեանց կարող է խղճի հանդարտութեամբ ծառայել իւր ազգին եւ եկեղեցւոյն:

Դուք ահա քանի ամաց հետէ կվարէք հոգաբարձական մեծահոգ պաշտօնն, որով պիտանացու եւ օգտակէտ հանդիսացած էք ոչ միայն դպրոցի զարգացմանն ու յառաջդիմութեան, նաեւ միշտ այդ հոգաբարձական կոչմամբ ձեռնտու եղել էք մեր անպաշտպան ազգայնոց, թող Ձեր այդպիսի ժամանակաւոր նեղութիւնն յախտենական վարձուց ակնկալու լինի Բարձրելոյն Աստուծոյ, որ գիտէ վարձատրել բարերջանիկ կենօք իւր սիրելիներն:

Ուրեմն, Բարեկամ, հարկ է Ձեզ տոկալ եւ համբերել եւ չթողուլ ազգային գործերն երեսի վրայ: Դուք լաւ գիտէք թէ Մարաղայում չկան այնքան պատրաստի գործող անձնաւորութիւնք, որոց հնար լինի վստահիլ գործ ու մնալ այնուհետեւ ապահով. Դուք ցոյց տուէք ինձ այդպիսի անձինքներ, ապա թէ հաւատալ նոցա դպրոցական գումար եւ այլ ազգային գործեր:

Մարգար վարժապետն իւր գրաւոր թղթովն յայտնեց ինձ թէ այլեւս չէ կարող գալ Մարաղա, այս թուղթն իմ գրութեամբս արդէն պրն. Ասրոնց հետ եկող չարվաղարի ձեռամբ առ Ձեզ ուղարկած եմ, ի տեղեկութիւն եւ վարձած եմ միեւնոյն այժմեան գրած պայմանաւ մի այլ քան Մարգարն առաւել պիտանի թէ դպրոցին եւ եկեղեցւոյն վարժապետ, որ շուտով կգայ. ուստի դուք միամիտ եղէք վարժապետի համար եւ կողմնակի անձիշտ խօսքերի մի լսէք թէ իբրեւ եկող վարժապետն Միրզա Կարապետ է, որ շատ սուտ է, այլ թէ ինձ համար դպրոցն առաւել բարձր նշանակութիւն ունենալով, միշտ աշխատած եմ գտնել վարժապետն, որ կատարելապէս բանագէտ եւ բարոյական անձն լինի:

Աղօթարար
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:
(ստորագր.)

20 Յուլիսի 1891, Դավրէժ

Մեծարգոյ պրն. Մելքոն,

Վարժապետ Մարգարն եւս եկաւ այդտեղ, իբրեւ իւր ունեցեալ գոյքն բերել եւ շուտով վերադառնալ: Թէեւ ըստ երեւոյթին այսպէս կթուի, սակայն եթէ այդ տեղ երեւի նորա կողմանէ որեւիցէ անբարի նպատակ ի դէմս դպրոցական գործոյն կամ առիթ խռովութեան ումուխիցէ կողմանէ՝ չարաչար կխայտառակեն եւ կպատուհասեն, որովհետեւ քաջ գիտելով ուսումնարանի օգուտն ու պիտանաւորութիւնն ուղարկած վարժապետիս՝ այսպէս տնօրինել եմ եւ այնպէս լինելու է անշուշտ. իսկ եթէ Մարգարն այդտեղ պատճառ կլինի այսուհետեւ որեւիցէ խռովութեան, կիմացնէք ինձ շուտով ի տեղեկութիւն:

Աղօթարար՝
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

10 Օգոստ. 1891, Դավրէժ

Վիճակաւոր
Առաջնորդ Հայոց
Ատրպատականի
Թիւ 295
19 Օգոստոս 1891 ամի
Ի Դավրէժ

Մեծարգոյ Հոգաբարձուաց Դպրոցի Հայոց Մարաղայի

Գրութեամբ կներկայանայ արգոյ հոգաբարձուացդ պրն. Կարապետ վարժապետն Աբգարեանց որ իբրեւ քաջամուտ անձն հայկական գիտութեան նամանաւանդ եկեղեցագարեանց որ իբրեւ քաջաշտութեանց եւ բազմախորձ իւր բազմաժամանակեայ վարած ուկան գիտելեաց եւ երաժշտութեանց եւ բազմախորձ իւր բազմաժամանակեայ վարած ուսուցչական պաշտօնի մէջ՝ թէ ըստ համեստաբարոյութեան եւ թէ խաղաղասէր պարկեշտ բնաւորութեան արժանի է ամեն յարգանաց եւ պատուոյ: Ուստի իմ մերձաւոր ճանաչողութեամբն նշանակելով պրն. Կարապետն ի պաշտօն ուսուցչութեանն համաձայն որոշեալ ութսուն թուաման տարեկան ուճկի. վստահութեամբ կերախաւորեմ սորա մասին, որ իւր ունեցեալ արժանաւոր բարեմասնութեամբն օգտակար հանդիսանալու է հայոց դպրոցին, եկեղեցւոյն եւ տեղոյն հասարակութեան: Նոյնպէս վստահ եմ, որ արգոյ հոգաբարձութիւնն եւս մխիթարելու է ուղարկած վարժապետիս իւրեանց յարգական վարմամբ:

Աղօթարար
Ստեփաննոս Եպիսկ. Մխիթարեան:

« Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ »
Հ Ա Յ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Ս ՈՒ Մ Ն Ա Թ Ե Ր Թ Ի

ՃԱ. ՏԱՐԻ — 1987

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի
Մեհիթարեան Միմասնաճիւղեան Կոլլե՛
ի վիճէնն
աշխատակցութեամբ ազգային եւ օտար բանա-
ւէրներու:
Բաժանորդագինն է ամէն երկրի համար՝
Աւստրիական Շիլինգ 1000.—
Աւստրիա + 10% յաւելեալ արժէքի տուրք

„ HANDES AMSORYA “

MONATSSCHRIFT
FÜR ARMENISCHE PHILOLOGIE

CI. — 1987

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-CONGREGATION
IN WIEN

unter Mitwirkung von Armenisten.

Jahresbezugpreis ohne Postzusendung S 1000,—,
in Österreich + 10% MWSt.

REDACTION DE LA REVUE «HANDES AMSORYA»

1070 Wien (Autriche), Mechitaristengasse 4

I N H A L T
(*mit Abbildungen)

	Seite
<i>de</i> BYZANCE NORAYR (Hrsg. Manassian Martiros): Anmerkungen und Korrekturen zu H. Hübschmann, „Armanische Grammatik“, I. Teil, 1895	1
MINASSIAN MARTIROS: Vollständige Konkordanz des Evangeliums nach Matthäus	27
*TER GHEVONDIAN HAIK: Die Kronen der Dynastie der Artaxiaden und deren Ursprung	281
TER GHEVONDIAN HAIK: The Royal Crowns of the Artaxiad Dynasty of Armenia	291
MINASSIAN MARTIROS: Bemerkungen zum Erscheinen des Artikels „Das Problem der Wiederherstellung des Textes von Eznik“	295
TOPALIAN P. MESROP: Die Werke des Komponisten und Armenologen P. Gregor Heboyan CMV (1910-1985)	325
AIGNER Dr. THOMAS: Die Konzerte von Aram Chačaturjan	429
HACOBIAN EMIL: Alte Dokumente zur Armenischen Geschichte in Iran	521

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ՛

Հ. ԳՐԻԳՈՐ Վ. ՀԵՊՈՅԵԱՆ՝

Իաշնամուրային երկեր, Վիեննա-Լոս Անջելես 1984, 96 էջ, 250 աւ. Շ.:

ԴՈԿՏ. Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ՝

Հետազոտական Ակնարկներ, Ազգ. Մատ. ՄԻԶ., Վիեննա 1984, էջ 168, գին՝ 150 աւ. Շ.:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ՛

Մինաս Վրդ. Ամդեցի, Պատրիարք Երուսաղէմի (1630—1704), Ազգ. Մատ. ՄԻԷ., Վիեննա 1984, 112 էջ, գին՝ 50 աւ. Շ.:

ELISABETH BAUER-MANNENDORF,

Das Frühe Armenien, Wien 1934, 176 Seiten mit zahlreichen Skizzen und Plänen, 10 Farb- und 247 Schwarzweißabbildungen, Ganzleinen mit Schutzumschlag, öS 440,—.

ԴՈԿՏ. Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ՝

Թուրքական Փութուվկաթը եւ Հայերը, Օսմանեան Կայսրութեան Զուրդական Քաղաքականութեան Պատմութիւնից, Ազգ. Մատ. ՄԻԷ., Վիեննա 1985, էջ 128, գին՝ 100 աւ. Շ.: